

Համարը Ն-105-3
Տիպը Որոշում

Տեսակը Մայր
Կարգավիճակը Գործում
է

Սկզբնաղբյուրը ՀՀՊՏ
30.06.04./34(333)
Հոդ.802

Ընդունման վայրը Երևան

Ընդունող մարմինը ՀՀ Ազգային ժողով
Ստորագրող մարմինը ՀՀ ԱԺ նախագահ
Վավերացնող մարմինը
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 10.07.2004

Ընդունման ամսաթիվը 08.06.2004
Ստորագրման ամսաթիվը 08.06.2004
Վավերացման ամսաթիվը
Ուժը կորցնելու ամսաթիվը

ՀՀ ԱԺ ՈՐՈՇՈՒՄԸ «ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ» ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ
(ԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ) ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

« 3Ի ՄԱՍԻՆ» ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՆ (ԿԻՑ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ) ՎԱՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը *որոշում է*.

Վավերացնել 1999 թվականի հունվարի 27-ին Ստրասբուրգ քաղաքում ստորագրված
«Կոռուպցիայի մասին» քրեական իրավունքի կոնվենցիան (կից հայտարարություններով):

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ

Ա. Բաղդասարյան

8 հունիսի 2004 թվականի,
քաղ. Երևան
Ն-105-3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3Ի

ՄԱՍԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Կոնվենցիայի 29-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Կոնվենցիայի IV Գլխով նախատեսված համագործակցության համար նշանակում է հետևյալ մարմինները.

ա) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունը՝ մինչդատական վարույթում գտնվող քրեական գործերով.

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը՝ դատարաններում քննվող քրեական գործերով:

Կոնվենցիայի 37-րդ հոդվածին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ չի քրեականացնի Կոնվենցիայի 12-րդ հոդվածով նախատեսված արարքը:

Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ օգտվելով Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հնարավորությունից՝ Հայաստանի Հանրապետությունը Կոնվենցիայի 17-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետում նշված 9-11-րդ հոդվածներով նախատեսված ցանկացած անձի նկատմամբ իր իրավագործության կանոնները կիրառելու է այն պահից սկսած, երբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով ակտիվ և պասիվ կաշառակերության արարք կատարելու համար քրեական պատասխանատվության ենթակա անձանց շրջանակի մեջ կընդգրկվեն նաև Կոնվենցիայի 9-11-րդ հոդվածներում նշված անձինք:

Կոնվենցիայի 37-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ իրեն իրավունք է վերապահում մերժելու Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված փոխադարձ իրավական օգնությունը, եթե իրեն ուղղված հարցումն առնչվում է այնպիսի հանցագործության, որը Հայաստանը դիտում է որպես քաղաքական հանցագործություն: